Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

21.11.2014թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.11.2014թ.-ի թիվ 121 կարգադրությունը, Վայոց ձորի մարզային ենթակայության <<Եղեգնաձորի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2013թ.-ի մշակույթային միջոցառումների ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի, ներքին աուդիտոր՝ Ն.Կարապետյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Մ.Սիմոնյանը և հաշվապահ՝ Հ.Մարգարյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ Վ.Կարապետյանը և Ն.Կարապետյանը: ՈՒՆեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երկու տարվա աշխատանքային փորձ: Ն.Կարապետյանը ունի ներքին աուդիտորի որակավորում:

Կազմակերպության կողմից իրականացվել է 9 մշակույթային միջոցառում 2920,0հազ.դրամ ընդհանուր գումարով, համաձայն սուբսիդիայի հատկացման պայմանագրերի: Առկա են նախահաշիվները՝ կազմված մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից/պատասխանատու ստորաբաժանում/, հաստատված մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից: Ըստ մշակույթային միջոցառումների առկա են ծախսերը հիմնավորող փաստաթղթերը/սցենարներ, հաշիվ-ապրանքագրեր, դրամարկղի ելքի օրդերները, միջոցառումների մասնակիցների հետ կնքված պայմանագրերը, ընդունման-հանձնման ակտերը/:

Թերություններ և խախտումներ.

Սուբսիդիայի հատկացման թվով 8 պայմանգրերում բացակայում է պայմանագրի կատարման ժամկետը: <<Տյառնընդառաջ>> և <<Հայ-ֆրանսիական բարեկամություն>> միջոցառմների դրամարկղային մուտքերը և ծախսերը գումարով 545,0 հազ.դրամ դրամարկղային գրքում չեն գրանցված, որով խախտվել է <<Դրամարկղային գործառնությունների մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները:

Առաջարկում ենք .

ա/ Կնքված պայմանագրերում ապահովել պայմանագրերի կատարման ժամկետների առկայություն:

բ/ Դրամարկղային գործունեությունը իրականացնել <<Դրամարկղային գործառնությունների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Աուդիտորական խմբի ղեկավար՝	Վ. Կարապետյան
Խմբի անդամ՝	Ն. Կարապետյան
Եղեգնաձորի մշակույթի տնօրեն՝	Մ. Սիմոնյան
Հաշվապահ՝	Հ. Մարգարյան